Կարգապահական գործ թիվ ԿԳ-21007

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021թ-ի հուլիսի 28-ի թիվ 282-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/167-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԿԻՄԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ),** նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Մարինե Ֆարմանյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Կարեն Սարդարյանի, Կարեն Մեժլումյանի, Էմին Բեգլարյանի, Ռուբեն Հակոբյանի, Լիլիթ Ղազանչյանի և Արսեն Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Կիմա Արտավազդի Հակոբյանին (արտոնագիր՝ 735) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Արմենուհի Ավետյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է հետևյալը.

Դիմողը 2018 թվականին դիմել է փաստաբան Կիմա Հակոբյանին (**այսուհետ՝ նաև Փաստաբան**) իր շահերը դատարանում ներկայացնելու համար և վճարել է 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Դիմողը հայտնել է, որ Կիմա Հակոբյանը պայմանագիր չի կնքել իր հետ և երբ 2020 թվականի դեկտեմբերին խնդրել է միջնորդություն ներկայացնել դատարան գումարի փոխհատուցման համար, Փաստաբանը պահանջել է հավելյալ 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ, որը Դիմողը հրաժարվել է վճարել:

Դիմողը հայտնել է, որ իր կողմից հավելյալ գումար փոխանցելուց հրաժարվելուց հետո փաստաբանը զայրացել է և պահանջել իրեն այլևս չանհանգստացնել: Դիմողն իր համար կենսական նշանակություն ունեցող նիստին ընդառաջ մնացել է անպաշտպան, իսկ Փաստաբանը նույնիսկ չի վերադարձրել իր մոտ եղած

փաստաթղթերը, ինչի պատճառով ինքը ստիպված է եղել վճարել պետական տուրք անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու համար:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 19.03.2021թ. թիվ 46-Ա/ԿԳ-21007 որոշման հիման վրա փաստաբան Կիմա Հակոբյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք)** 2.7.2, 3.1.3 և 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշներով:

22.03.2021թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հայկ Բաբայանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Փաստաբանի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել է բացատրություն և պնդել դիմումով իր հայտնածը:

Պալատի խորհրդի նիստին Դիմողը ներկայացել է, և ըստ էության հաստատել է նախկինում ներկայացված դիրքորոշումը:

<u>3.2 Փաստաբանի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Փաստաբանը ներկայացրել է առարկություն Դիմումի վերաբերյալ, որում նշվել է հետևյալը.

2018 թվականին Դիմողը խնդրել է իրեն ցուցաբերել իրավաբանական օգնություն: Փաստաբանը Դիմողին տեղեկացրել է, որ գտնվում է երեխայի խնամքի արձակուրդում և Դիմողի հետ չի կարող կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր: Դիմողը խնդրել է, որ Փաստաբանն օգնի իրեն առանց պայմանագիր կնքելու: Փաստաբանը համաձայնվել է՝ պայմանավորվելով կնքել պայմանագիր իր՝ երեխայի խնամքի արձակուրդի ավարտից հետո:

Կողմերի համաձայնությամբ փաստաբանական ծառայությունների արժեքը կազմել է 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից Դիմողը վճարել է 70.000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամը և խնդրել մնացած գումարի դիմաց կոսմետիկա տալ:

Փաստաբանը հայտնել է, որ Արմենուհի Ավետյանի շահերը ներկայացրել է թիվ ՎԴ6/0264/05/17 վարչական գործով, մասնակցել է բոլոր դատական նիստերին, այդ ընթացքում Դիմողը որևէ գումար չի վճարել, նույնիսկ ճանապարհածախսը, որը, ըստ պայմանավորվածության, Դիմողը պարտավորվել էր վճարել:

Փաստաբանը տեղեկացրել է նաև, որ 2018 թվականից մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը Փաստաբանը Դիմողին մատուցել է փաստաբանական ծառայություն, և Դիմողը որևէ դժգոհություն չի ունեցել:

Փաստաբանը 2020 թվականի օգոստոս ամսին, երեխայի խնամքի արձակուրդը

լրանալուց հետո, Դիմողին առաջարկել է համաձայն բանավոր պայմանավորվածության՝ հաշվարկ կատարել և պայմանագիր կնքել, սակայն Դիմողը խնդրել է սպասել՝ պատճառաբանելով, որ գումար չունի:

2020 թվականի դեկտեմբեր կզբին Դիմողը զանգահարել է և առաջարկել 2021 թվականի հունվարի 27-ին նշանակված դատական նիստին միջնորդություն ներկայացնել վարչական դատարան՝ փաստաբանին վճարված գումարը դատական ծախսերի մեջ ներառելու մասին: Փաստաբանը բացատրել է, որ միջնորդություն ներկայացնելու համար նախ անհրաժեշտ է պայմանագիր կնքել և կրկին առաջարկել է կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր, ինչից Դիմողը կրկին հրաժարվել է:

2021 թվականի հունվարի 27-ին նշանակված դատական նիստին Փաստաբանը չի ներկայացել, քանի որ Դիմողը պահանջել է, որ դատական նիստերի այլևս չներկայանա, իսկ միջնորդություն չի ներկայացրել, քանի որ չի եղել կնքված պայմանագիր և վճարման անդորրագիր:

Ինչ վերաբերում է Դիմողի պնդմամբ չվերադարձված փաստաթղթերին՝ Փաստաբանը նշել է, որ իր մոտ գտնվող փաստաթղթերի պատճենները, նույնիսկ մի քանի օրինակ, ինքն անձամբ է հանձնել Դիմողին: Եվ չնայած այն հանգամանքին, որ Դիմողը չի պահանջել այդ փաստաթղթերը, այնուհանդերձ մինչև դատական նիստը Փաստաբանը հանձնել է փաստաթղթերը իր հարազատներից մեկին, որպեսզի փոխանցի Դիմողին, սակայն Դիմողը դիտավորյալ չի վերցրել՝ պատճառաբանելով, որ ամբողջ փաթեթը չի ուղարկվել:

Փաստաբանը նշել է, որ մատուցել է բարձրակարգ իրավաբանական ծառայություններ, իսկ Դիմողի կողմից նշված «վերականգնել արդարությունը և ոտնահարված իրավունքները» պահանջը հիմնազուրկ է:

Պալատի խորհրդի նիստին Փաստաբանը ներկայացել է և ըստ էության հաստատել է նախկինում ներկայացված դիրքորոշումը:

<u>3.3 Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:</u>

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 10.05.2021թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Կիմա Հակոբյանը ներկայացրել է առարկություն:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 17.05.2021թ.

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 28.07.2021թ. ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստը.

1. Դիմող Արմենուհի Ավետյանի ներկայացուցիչը թիվ ՎԴ6/0264/05/17 վարչական գործով հանդիսացել է Փաստաբան Կիմա Հակոբյանը: *Սույն փաստը հաստատվում է դիմումով և Փաստաբանի ներկայացրած առարկությամբ:*

2. Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի ներկայացումը *12.03.2018թ-*ից: *Սույն փաստը հաստատվում է գործում առկա 12.03.2018թ. լիազորագրով:*

3. Փաստաբանը իրավական օգնություն է ցույց տվել վճարովի հիմունքներով, որոնք շարունակական իրականացվել են մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը: *Սույն փաստը հաստատվում է դիմումով և Փաստաբանի ներկայացրած առարկությամբ:*

4. Արմենուհի Ավետյանի և Կիմա Հակոբյանի միջև չի կնքվել փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր: *Սույն փաստը ևս հաստատվում է դիմումով և Փաստաբանի ներկայացրած առարկությամբ:*

5. Փաստաբանը ընդունել է, որ ծառայությունները եղել են վճարովի հիմունքներով, սակայն փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր չի կնքվել՝ հաշվի առնելով իր՝ երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու հանգամանքը: *Սույն փաստը հաստատվում է փաստաբանի կողմից ներկայացված բացատրությամբ:*

6. Փաստաբանը չի ներկայացել Դիմողի գործով 2021թ. հունվարի 27-ին նշանակված դատական նիստին: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով:*

6. <u>Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Կիմա Հակոբյանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 19.10.2007թ., և 2018-2021թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական վարույթը):

<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կիմա Հակոբյանը ենթակա է պատասխանատվության Կանոնագրքի 3.1.3 ենթակետի խախտման համար, իսկ

Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 3.1.3 ենթակետի խախտման մասով.

Կանոնագրքի 3.1.3 ենթակետի համաձայն՝ *Գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:*

Սույն դրույթի նորմատիվ էությունը կայանում է նրանում, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի բարեխիղճ, փոխադարձաբար արդյունավետ և գործարար շրջանառության էթիկայի տեսանկյունից ընդունելի գործելակերպի համար: Միևնույն ժամանակ, փաստաբանի և վստահորդի միջև կնքված գրավոր պայմանագիրը թույլ է տալիս խուսափել տարաձայնություններից կամ դրանց առաջացման դեպքում ծառայում է վեճի լուծման ապացուցողական հիմք:

Կանոնագրքի 3.1.3 կետով գրավոր պայմանագրի առումով արվում է մեկ բացառություն՝ թույլատրելով փաստաբանին վստահորդի հետ գրավոր պայմանագիր կնքել նրա՝ հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից 2 ամսվա ընթացքում, այն էլ, եթե առկա են գործի որոշ առանձնահատուկ հանգամանքներ, որոնք կամ գործի ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:

Կանոնագրքով, մեծ կարևորություն տալով փաստաբանի և վստահորդի միջև իրավահարաբերությունների գրավոր ամրագրմանը, ցանկալի է համարվում ընդհուպ անհատույց հիմունքներով իրավաբանական օգնության ցուցաբերումը գրավոր պայմանագրի հիման վրա (3.1.5 ենթակետ): Ընդ որում, Կանոնագրքի 3.1.3 կետի շարադրանքից հետևում է, որ գրավոր պայմանագիր կնքելու պարտականությունը հստակորեն դրվում է փաստաբանի վրա: Այսինքն, եթե պատվիրատուն կամ վստահորդը չեն պնդում գրավոր պայմանագրի կնքման վրա կամ ցանկանում են փաստաբանի հետ հարաբերվել՝ առանց իրավական հիմքի, փաստաբանը պարտավոր է նրանց իրազեկել, բացատրել դրա անթույլատրելիության վերաբերյալ և հրաժարվել առանց պայմանագրի՝ նրանց իրավաբանական ծառայություններ մատուցելուց:

Ելնելով սույն գործի փաստերից՝ Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը խախտել է Կանոնագրքի 3.1.3 կետի պահանջը, քանի որ գործում առկա ապացույցները՝ Պատասխանողի և Դիմողի կողմից ներկայացված բացատրությունները ապացուցում են, որ Պատասխանողը վճարովի իրավական օգնություն է ցույց տվել Արմենուհի Ավետյանին սկսած 12.03.2018թ-ից մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը, սակայն չի կնքել իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր՝ հաշվի առնելով՝ իր երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու հանգամանքը:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կիմա Հակոբյանը թույլ է տվել Կանոնագրքի 3.1.3 ենթակետերի խախտում, ինչի համար փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության:

Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման մասով.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:*

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի վերլուծությունից հետևում է, որ փաստաբանի մասնագիտական բարեխղճությունը ներառում է մի շարք բաղադրիչների միաժամանակյա առկայություն.

Ա. իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն,

Բ. վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն,

Գ. հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի վերլուծությունից բխում է, որ փաստաբանը պարտավոր է՝

Ա. Ժամանակին հանդես գալ վստահորդի անունից, ինչն էլ ենթադրում է ՀՀ օրենսդրությամբ համապատասխան գործողությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետների խստիվ պահպանում, իսկ այն դեպքերում, երբ ժամկետներ սահմանված չեն, տվյալ իրավիճակից բխող հնարավոր սեղմ ժամկետներում

համապատասխան գործողությունների կատարում.

Բ. Գիտակցաբար և ջանասիրաբար վստահորդին խորհուրդներ տալու, նրան պաշտպանելու և վերջինիս անունից հանդես գալու գործողության կատարում, ինչը ենթադրում է վստահորդին վերջինիս շահերից բխող լավագույն իրավական լուծումներ առաջարկելու, ողջամիտ, իրավաչափ և իրագործելի խորհուրդներ տալու վարքագծի դրսևորում:

Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործի քննության ընթացքում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնցով կհաստատվեր Պատասխանողի կողմից Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտում թույլ տալու հանգամանքը:

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Խորհուրդը գտնում է, որ փաստաբանի մասնագիտական վարքագծի վերոնշյալ չափանիշների օբյեկտիվ և բազմակողմանի քննության համար ապացույցների անբավարարության բացասական հետևանքը պետք է կրի այդ ապացույցները ներկայացնելու պարտականություն ունեցող կողմը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Դիմողի կողմից սույն կարգապահական վարույթի ընթացքում չհիմնավորվեցին իր կողմից վկայակոչած հանգամանքները, ուստի Խորհուրդը գտնում է, որ չի հիմնավորվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Ուստի, Խորհուրդը գտնում է, որ Կանոնագրքի 2.7.2, և 3.5.5 ենթակետերի խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Կարգապահական տույժի ընտրությունը.

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական

տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

1) նկատողություն.
2) խիստ նկատողություն.
3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների.
4) տուգանք.
5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Կիմա Հակոբյանի անձը բնութագրող հանգամանքները, ինչից ելնելով Կիմա Հակոբյանի նկատմամբ կիրառում է «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին 2-րդ մասերի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 39.8-րդ հոդվածների պահանջներով՝

Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Կիմա Արտավազդի Հակոբյանին (արտոնագիր թիվ 735) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 3.1.3 ենթակետի պահանջի խախտման համար:

2. Փաստաբան Կիմա Արտավազդի Հակոբյանի (արտոնագիր թիվ 735) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Փաստաբան Կիմա Արտավազդի Հակոբյանի (արտոնագիր՝ 735) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի մասով՝ կարճել:

4. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Կիմա Արտավազդի Հակոբյանին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Մարինե Ֆարմանյան

28 հուլիս 2021թ.
թիվ ԿԳ/167-Ա
ք. Երևան